ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում 16.09.2011թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ աշխատակազմի ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարությունների կազմակերպման մասին / Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/:

2. Համայնքներում ինտերնետ կապի առկայության և շենքերի հասցեավորման խնդիրների մասին / զեկ.՝ ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

3. Համայնքների կողմից հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի հավաքագրման ընթացքի, աշխատավարձների ու սոցվճարների նախկին պարտքերի մարման մասին /զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

4. Մարզին տրամադրված 320 տոննա էլիտա և առաջին վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման ընթացքի մասին / զեկ.՝գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

5. Հեռագնա արոտավայրերի վարձակալության պայմանագրերի կնքման գործընթացի մասին /զեկ.՝ հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ/ :

6.Այլ հարցեր և հայտարարություններ:
Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝

Մարզպետի տեղակալ Մ.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

--- Հետևել սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին,բարձրացնել ցուցանիշները:

Մարզպետի տեղակալ Ա.ԱՐՍԵՆՅԱՆԻՆ

---Մարդահամարի կազմակերպման և անցկացման նպատակով անճշտությունները շտկելու ուղղությամբ կատարել բնակչության ճշգրիտ հասցեավորման աշխատանքներ:

ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

--- Կազմակերպել համայնքապետարաններում ինտերնետ կապի առկայության աշխատանքները և իրականացնել ինտերնետային կայքերի ստեղծման գործընթացը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆԻՆ

--- Հետևել մարզին տրամադրված էլիտա և առաջնային վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման ընթացքին՝ արագ ավարտել այդ գործընթացը,որպեսզի համայնքները կարողանան օգտվել նաև այս տարվա աշնանացանի համար տրվող հացահատիկի սերմացուից:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

--- Մարզպետի համաձայնեցմանը սահմանված կարգով ներկայացնել հեռագնա արոտավայրերի վարձակալական պայմանագրերը չկատարելու դեպքում համայնքի ղեկավարը կենթարկվի վարչական տույժի:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ